

Համաձայնագիր

**Բարձրագույն կրթության կրթական ծրագրերով եւ
լրացուցիչ մասնագիտական ծրագրերով Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից պետությունների մաքսային
ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների մաքսային ծառայությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով «Մաքսային գործերում համագործակցության եւ փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրի դրույթները,

ձգտելով զարգացնել գերատեսչական կրթական կազմակերպությունների (կրթության հաստատությունների) միջեւ համագործակցությունը, ինչպես նաեւ փոխօգնություն ցուցաբերել բարձրագույն կրթության կրթական ծրագրերով եւ լրացուցիչ մասնագիտական ծրագրերով ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու բնագավառում՝

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում միմյանց աջակցություն են ցուցաբերում բարձրագույն կրթության կրթական ծրագրերով եւ լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստումը կազմակերպելու գործում՝ այն միջազգային պայմանագրերին, որոնց մասնակիցներ են Կողմերի պետությունները, եւ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Կողմերն աջակցություն են ցուցաբերում Կողմերի պետությունների շահագրգիռ կրթական կազմակերպությունների (կրթության հաստատությունների) միջեւ համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ համապատասխան կրթական ծրագրերի մշակման եւ իրագործման, միջազգային ակադեմիական փոխանակումների, գիտական կադրերի պատրաստման, համատեղ կրթական եւ գիտական միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերով:

Կողմերն աջակցում են մաքսային մարմինների աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացմանը՝ մաքսային գործի ոլորտում առաջատար փորձի ուսումնասիրմանն ուղղված միջոցառումներ կազմակերպելու միջոցով:

Կողմերը համապատասխան կրթական ծրագրով ուսուցումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան 6 ամիս առաջ, երկկողմ կամ բազմակողմ հիմունքներով համաձայնեցնում են ուսուցման կազմակերպման եւ անցկացման կոնկրետ միջոցառումները:

Հոդված 2

Կրթական կամ գիտական միջոցառումներ կազմակերպող Կողմն իր վրա է վերցնում դրանց անցկացման ծախսերը:

Այլ պայմանավորվածությունների բացակայության դեպքում պաշտոնատար անձանց գործուղման ծախսերն իր վրա է վերցնում ուղարկող Կողմը կամ անմիջապես պաշտոնատար անձինք՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ կրթական կամ գիտական միջոցառումներին ներգրավվում են երրորդ երկրների գիտամանկավարժական աշխատողներ կամ մասնագետներ, նրանց կացության եւ փոխադրման ապահովման հետ կապված ծախսերն իր վրա է վերցնում ընդունող Կողմը:

Հոդված 3

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը հանդիսացող փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ եւ ուժի մեջ են մտնում սույն համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 4

Սույն համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կամ տարաձայնությունները կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

Հոդված 5

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո: Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Սույն համաձայնագիրը բաց է այն չստորագրած ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող ԱՊՀ մասնակից պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Սույն համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ ոչ ուշ, քան դուրս գալուց 6 ամիս առաջ՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին եւ կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Կողմերի պետությունների միջեւ հարաբերություններում դադարում է «Մաքսային աշխատողների պատրաստման եւ որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին» 1994 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնագրի գործողությունը:

Սույն համաձայնագրի ավանդապահն է Դաշնային մաքսային ծառայությունը (Ռուսաստանի Դաշնություն):

Կատարված է Նիժնի Նովգորոդ քաղաքում, 2024 թվականի սեպտեմբերի 27-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Դաշնային մաքսային ծառայությունում (Ռուսաստանի Դաշնություն), որը սույն համաձայնագիրը ստորագրած Կողմերին կուղարկի դրա հաստատված պատճենները:

**Ադրբեջանի Հանրապետության
պետական մաքսային
կոմիտեի կողմից՝**

**Մոլդովայի Հանրապետության
Ֆինանսների նախարարությանն
առընթեր մաքսային ծառայության
կողմից՝**

**Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների
կոմիտեի կողմից՝**

**Դաշնային մաքսային ծառայության
կողմից (Ռուսաստանի Դաշնություն)՝**

[ստորագրություն]

[ստորագրություն]

**Բելառուսի Հանրապետության
պետական մաքսային
կոմիտեի կողմից՝**

[ստորագրություն]

**Տաջիկստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր մաքսային
ծառայության կողմից՝**

[ստորագրություն]

**Ղազախստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության
կողմից՝**

[ստորագրություն]

**Թուրքմենստանի պետական
մաքսային ծառայության կողմից՝**

**Ղրղզստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարությանն
առընթեր պետական մաքսային
ծառայության կողմից՝**

[ստորագրություն]

**Ուզբեկստանի Հանրապետության
Էկոնոմիկայի եւ Ֆինանսների
նախարարությանն առընթեր
մաքսային կոմիտեի կողմից՝**

[ստորագրություն]

Փաստաթղթի բնօրինակը գտնվում է Ռուսաստանի ԴՄԾ-ի՝
2024 թվականի թիվ 01-71 գործում:

Պատճենը՝ ընդամենը 3 (երեք) թերթից:

Ճիշտ է

Ռուսաստանի ԴՄԾ-ի գործերի կառավարման
պետի տեղակալ՝ _____[ստորագրություն]____Ի. Բելյաև

[կնիք]

7 մարտի 2025 թվականի

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. սեպտեմբերի 27-ին ստորագրված «Բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական ծրագրերով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

Статья 2

Соглашение

о подготовке кадров для таможенных служб государств – участников Содружества Независимых Государств по образовательным программам высшего образования и дополнительным профессиональным программам

Таможенные службы государств – участников Содружества Независимых Государств (далее – СНГ), именуемые в дальнейшем Сторонами,

принимая во внимание положения Соглашения о сотрудничестве и взаимопомощи в таможенных делах от 15 апреля 1994 года,

стремясь развивать сотрудничество между ведомственными образовательными организациями (учреждениями образования), а также оказывать взаимопомощь в области подготовки кадров для таможенных служб государств – участников СНГ по образовательным программам высшего образования и дополнительным профессиональным программам,

согласились о нижеследующем:

Статья 1

Стороны в пределах имеющихся у них возможностей оказывают друг другу содействие в организации подготовки кадров для таможенных служб по образовательным программам высшего образования и дополнительным профессиональным программам в соответствии с международными договорами, участниками которых являются государства Сторон, и законодательством государств Сторон.

Стороны оказывают содействие развитию сотрудничества между заинтересованными образовательными организациями (учреждениями образования) государств Сторон, в том числе по вопросам разработки и реализации соответствующих образовательных программ, международных академических обменов, подготовки научных кадров, организации и проведения совместных образовательных и научных мероприятий.

Стороны содействуют повышению профессионального уровня сотрудников таможенных органов путем организации мероприятий, направленных на изучение передового опыта в области таможенного дела.

Стороны не позднее чем за 6 месяцев до даты начала обучения по соответствующей образовательной программе согласовывают на двусторонней или многосторонней основе конкретные мероприятия по организации и проведению обучения.

Статья 2

Сторона, организующая образовательные или научные мероприятия, берет на себя расходы по их проведению.

В отсутствие иных договоренностей расходы по командированию должностных лиц берет на себя направляющая Сторона или непосредственно должностные лица в соответствии с законодательством государств Сторон.

В случае если к образовательным или научным мероприятиям привлекаются научно-педагогические работники или специалисты третьих государств, то расходы, связанные с их пребыванием и обеспечением перевода, берет на себя принимающая Сторона.

Статья 3

По взаимному согласию Сторон в настоящее Соглашение могут быть внесены изменения и дополнения, являющиеся его неотъемлемой частью, которые оформляются соответствующим протоколом и вступают в силу в порядке, предусмотренном в статье 5 настоящего Соглашения.

Статья 4

Споры или разногласия, связанные с применением или толкованием положений настоящего Соглашения, разрешаются путем консультаций или переговоров между заинтересованными Сторонами.

Статья 5

Настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием третьего уведомления о выполнении подписавшими его Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу. Для Сторон, выполнивших внутригосударственные процедуры позднее, настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием соответствующих документов.

Настоящее Соглашение открыто для присоединения не подписавших его таможенных служб государств – участников СНГ путем передачи депозитарию документа о присоединении.

Для присоединяющегося государства – участника СНГ настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием документа о присоединении.

Настоящее Соглашение заключается на неопределенный срок. Каждая из Сторон вправе выйти из настоящего Соглашения, направив депозитарию письменное уведомление о таком своем намерении не позднее чем за 6 месяцев до выхода и урегулировав обязательства, возникшие за время действия настоящего Соглашения.

В отношениях между государствами Сторон настоящего Соглашения с даты его вступления в силу прекращает свое действие Соглашение о сотрудничестве в области подготовки и повышения квалификации таможенных работников от 23 ноября 1994 г.

Депозитарием настоящего Соглашения является Федеральная таможенная служба (Российская Федерация).

Совершено в г. Нижнем Новгороде 27 » сентября 2024 года в одном экземпляре на русском языке. Подлинный экземпляр хранится в Федеральной таможенной службе (Российская Федерация), которая направит подписавшим настоящее Соглашение Сторонам его заверенные копии.

За Государственный таможенный
комитет
Азербайджанской Республики

За Таможенную службу
при Министерстве финансов
Республики Молдова

За Комитет государственных
доходов
Республики Армения

За Федеральную таможенную
службу
(Российская Федерация)

За Государственный таможенный
комитет
Республики Беларусь

За Таможенную службу
при Правительстве
Республики Таджикистан

За Министерство финансов
Республики Казахстан

За Государственную таможенную
службу
Туркменистана

За Государственную таможенную
службу при Министерстве
финансов Кыргызской
Республики

За Таможенный комитет при
Министерстве экономики и
финансов
Республики Узбекистан

Подлинник документа находится в деле ФТС России № 01-71
за 2024 г.

Всего в копии 3 (три) листа.

Верно

Заместитель начальника
Управления делами ФТС России
«07» марта 2025 **УПРАВЛЕНИЕ**
И. И. Беляев



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. սեպտեմբերի 27-ին ստորագրված «Բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական ծրագրերով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող՝ ավանդապահի կողմից հաստատված օրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**




Նելլի Սարգսյան